ՀՈԼՈՎՄԱՆ ՈՒ ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՇԱՂԱԽԻ ԵՆԹԱԲԱՐԲԱՌՈՒՄ

Բ. Խ. ՄԵԺՈՒՆՑ

Շաղախի խոսվածքախումբը պատկանում է այն բարբառների թվին, որոնց ձևաբանությունը բավական հեռացել է հին հայերենի օրինաչափություններից։ Ստորև կանդրադառնանք նրա հոլովման ու խոնարհման համակարգում նկատվող առանձնահատկություններից մի քանիսին։

Շաղախի ենթաբարբառում գոյական անունների հոլովումը հաճախ որոշվում է բառի անորոշ կամ որոշյալ կիրառությամբ։ Այսպես, բաղաձայնով վերջավորվող գոյականների մեծ մասն անորոշ առման դեպքում ենթարկվում է ու, *իսկ որոշյալ առման դեպքում՝* է||ի *հոլովման,* ու *ձայնավորով վերջավորվող գոյականներն անորոշ առման դեպքում հոլովվում են* վու, *իսկ որոշյալ առման դեպքում՝* վէ||վի *հոլովմամբ։ Սակայն ենթաբարբառում ունենք մի խումբ գոյականներ, որ ստանում են միայն մեկ հոլովիչ։ Այս հանգամանքը հաշվի առնելով, Շաղախի ենթաբարբառի համար ընդունել ենք պարզ և խառը հոլովումներ։ Պարզ հոլովման ենթարկվում են այն գոյականները, որոնք անորոշ և որոշյալ առումների դեպքում սեռականում ստանում են միայն մեկ հոլովիչ, ինչպես՝ ուղղ. աղջիկ-ախճիգ, անորոշ և որոշյալ սեռ. ըխճըկան, ուղղ. աներ-հանէր, անորոշ և որոշյալ սեռ. հանուրու, ուղղ. շունշօն, անորոշ և որոշյալ սեռ. շան(ը) և այլն։*

Խառը հոլովման են ենթարկվում այն գոյականները, որոնք անորոշ առման դեպքում ստանում են մեկ, իսկ որոշյալ առման դեպքում՝ մի այլ հոլովիչ։ Այս երևույթը տարածվում է գոյականների ոչ միայն եզակի, այլև հոգնակի թվի վրա. օրինակ՝

Եզակի		Հոգնակի	
Անորոշ	Որոշյալ	Անորոշ	Որոշյալ
Ուղղ. քար	քարը	քարըր	քարըրը
Սեռ. քարու	քարէն	քըրէրու	քըրէրէն
Տր. քարու	քարէն	քըրէրու	քըրէրէն
Հայց. քար	քարը	քարըր	քարըրը
Բաց. քարա	քարան	քըրէրան	քըրէրան
Գործ. քարավ	քարավը	քըրէրավ	քըրէրավը
Ներգ. քարըմ	քարըմը	քըրէրըմ	քըրէրըմը

Հոլովման համակարգի ամբողջական պատկերը ցույց տալու համար ուսումնասիրել ենք Շաղախի ենթաբարբառի բառային կազմը և որոշել, թե ո՞ր բառերն են ենթարկվում պարզ և որո՞նք խառը հոլովման։

Պարզ հոլովման ենթարկվում են.

ա) ի, է ձայնավորներով վերջավորվող երկվանկ և բազմավանկ բառերը (բացի ագի-հաքի, կաշի-կաշի, լեզու-լյուզի երկվանկերից),

բ) ու հոլովման ենթարկվող աներ-հանէր, եղբայր-ախպէր, հորեղբայր-ղօրփէր, տայգր-տաքիր գոյականները,

գ) ը-ով վերջավորվող բառերի մեծ մասը,

դ) արտաքին ա հոլովման ենթարկվող աղջիկ-ախճիգյ, կին-կընէգյ բառերը և դրանցով կազմված բարդությունները, ինչպես նաև՝ ներքին ա հոլովման շուն-շօն, տուն-տօն գոյականները,

ե) օ (ո) հոլովման ենթարկվող հայր-հաբ, մայր-մար, քոյր-քուր բառերը,

զ) անեզական այն բառերը, որոնք ցույց են տալիս ազգակցություն, գերդաստան, տոհմ։

Խառը հոլովման են պատկանում՝

ա) բաղաձայնահանգ գոյականների մեծ մասը,

բ) ա ձայնավորով վերջավորվող գոյականները,

գ) ը-ով վերջավորվող մի խումբ բառեր,

դ) ի ձայնավորով վերջավորվող բոլոր միավանկ և ագի-հաքի, կաշի-կաշի, լեղու-լյա՞զի երկվանկ բառերը,

ե) տեղի հատուկ անունները,

զ) ժամանակ ցույց տվող բոլոր գոյականները,

է) ու, ու, օ ձայնավորներով վերջավորվող գոյականները։

Քննվող ենթաբարբառում ա ձայնավորով վերջավորվող բառերի եզակի ուղղական, հայցական և բացառական հոլովները ձևով նման են. դրանց տարբերակումը կատարվում է միայն շեշտով. ուղղական և հայցական հոլովներում շեշտն ընկնում է բառի վերջընթեր վանկի ձայնավորի վրա, իսկ բացառականում՝ վերջին ձայնավորի վրա (օրինակ՝ ուղղ. դյու՛լբան ճըղվալ ա, հայց. մարը գյու՛լբան կըրկատալ ա, բաց. ուրան գյուլբա՛ն մին թիլ ա հանալ և այլն)։

Ի, է ձայնավորներով վերջավորվող բառերը ենթարկվում են արտաքին ու հոլովման, սակայն որոշյալ առման դեպքում դրանք կարող են հոլովվել նաև ուղղականաձև[1] հոլովմամբ, այսինքն՝ հոլովման ժամանակ ուղղականի ձևը պահպանվում է նաև սեռական և տրական հոլովներում։ Այս դեպքում ևս հոլովային իմաստների տարբերակումը կատարվում է շեշտի դիրքով. ուղղականում շեշտը դրվում է բառի վերջընթեր վանկի ձայնավորի, իսկ սեռական և տրական հոլովներում՝ վերջին վանկի ձայնավորի վրա (ուղղ. ծի՛լին սօր ա, սեռ. ծիլի՛ն իբրսը սրվացալ ա, ուղղ. կյի՛նին թուվալ ա, սեռ. կյինի՛ն լիտրը էրկու մանաթ ա տէռալ և այլն)։

Աներ-հանէր, եղբայր-ախպէր, հորեղբայր-ղօրփէր, տայգր-տաքիր բառերը եզակի և հոգնակի թեք հոլովումներում կարող են ստանալ արտաքին ու հոլովիչ՝ միաժամանակ պահպանելով ներքին թեքման ու հոլովիչով ձևը, որի պատճառով էլ կունենանք կրկնակի հոլովիչով թեքման ձև, ինչպես՝ սեռ. տաքրու || տաքրուրցու, բաց. տաքրուրու || աքրուրցու անա, գործ. տաքրուրու || || տաքրուրցու անավ և այլն։

Ենթաբարբառիս որոշ գոյականներին հատուկ է հոլովման բազմաձևություն, որը մեծ մասամբ հանդես է գալիս հոգնակի թեք հոլովներում, ինչ-

1 Այդպիսի հոլովումը պայմանականորեն անվանում ենք ուղղականաձև։

պես՝ ուղղ. ծուվէր «ձվեր», սեռ. ծուվէրու‖ծուվէնուցը‖ծուվէնուցու, ուղղ. քուվէրքը «քույրերը», սեռ. քուվօրցը‖քուվօրցու‖քուվօրաաց և այլն։

Շաղախի ենթաբարբառում համադրական բացառականը սովորաբար կազմվում է ա մասնիկով (որոշ դեպքերում նաև անա), իսկ վերլուծական բացառականը՝ անա մասնիկով. սակայն ժամանակ ցույց տվող գոյականների բացառականն առանձին դարձվածքներում ունենում է նաև աց‖ա̈ց վերջավորությունը (քշանաց-քյիշէրավ «վաղ առավոտյան», ուրդո̈ւնաց-րո̈ղո̈ն ա կյա̈ս «ուշ-ուշ է դալիս», օրկանց-օր ըմ տըսնաս «ուշ-ուշ եմ տեսնում» և այլն)։

Եզակի և հոգնակի թեք հոլովներում ու, ո̈ ձայնավորները նախորդող և հաջորդող հնչյուններին կարող են ամբողջապես իրենց նմանեցնել՝ ստեղծելով ներդաշնակություն (ուղղ. արմուկն-արմունգ, հոգնակի բաց. ուրմունգնան, ուղղ. բազումք-պէգո̈ւկ, եզ. սեռ.-տր. պո̈ղո̈կէն, ուղղ. ըշունքնէ «աշուններ», հոգ. սեռ.-տր. ուշունքնու)։

Ենթաբարբառի առանձնահատկությունները որոշ չափով դրսևորվում են նաև դերանունների հոլովման համակարգում։ Այսպես, ի տարբերություն ժամանակակից հայերենի, Շաղախի ենթաբարբառի անվանական հոլովում ունեցող դերանունները ենթարկվում են թե՛ պարզ, և թե՛ խառը հոլովումների։ Պարզ հոլովման են ենթարկվում ստացական դերանունները, իսկ խառը հոլովման՝ հարցա-հարաբերական, որոշյալ, անորոշ, փոխադարձ և ժխտական դերանունները։

Ենթաբարբառում դերանվանական հոլովման պատկերը արտահայտվում է սեռական և տրական հոլովներում բառի արմատի փոփոխմամբ, սակայն որոշ դերանուններ շեղվում են այդ օրինաչափությունից։ Այսպես, օրինակ՝ երրորդ դեմքի ինքը անձնական դերանունը չի պահպանել սեռականի ձևը և նրա փոխարեն գործածվում է տրականի ձևը.

Ուղղ. ինքը	Բաց. ո̈րա̈ն անա
Սեռ. ո̈րա̈ն	Գործ. ո̈րա̈ն անավ
Տր. ո̈րա̈ն	Ներգ. ո̈րա̈ն անըմ

Հարցա-հարաբերական ճու «ով» դերանունը, ընդհակառակը, տրական հոլովի համար առանձին ձև չունի, նրա փոխարեն գործածվում է սեռականի հո̈ւր ձևը. այս դեպքում, բնականաբար, բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են սեռականով, օրինակ՝

Ուղղ. հու	Բաց. հո̈ւր անա
Սեռ. հո̈ւր	Գործ. հո̈ւր անավ
Տր. հո̈ւր	Ներգ. հո̈ւր անըմ

Շաղախի ենթաբարբառում բայական առանձնահատկությունները դրսևորվում են թե՛ դերբայների կազմության ու նրանց կիրառության և թե՛ դիմավոր ձևերի կրած փոփոխությունների մեջ։ Այսպես, ի տարբերություն ժամանակակից հայերենի, Շաղախի ենթաբարբառում անորոշ դերբայն ունի անվանական և բայական գործածություն։ Անվանաբար գործածվելիս անորոշ դերբայը հոդ է ստանում և հոլովվում ու–է‖ի խառը հոլովմամբ (անորոշ առման դեպքում ու, իսկ որոշյալ առման դեպքում է‖ի հոլովմամբ)։ Անորոշ դերբայի տարբեր ձևերը նախադասության մեջ ընդհանրապես կիրառական

նույն նշանակությունն ունեն, այսինքն՝ կատարում են որոշչի պաշտոն։ Սակայն անորոշի (ու հոլովման) սեռականն իմաստային ինչ-ինչ տարբերություն է ցուցաբերում. այսպես՝ ուտիլու հաց, կյիրիլու նամակ ոչ միայն նշանակում է «ուտելու հաց», «գրելու նամակ», այլև՝ «դեռ չկերած հաց», «դեռ չգրված նամակ»։

Բայական գործածությամբ անորոշ դերբայը մասնակցում է պայմանական, հարկադրական եղանակների անցյալ ապառնի ժամանակների, պայմանական եղանակի ժխտական ձևերի և արգելական հրամայականի կազմությանը։ Այսպես, օրինակ՝ պատմիլ ըմ լյա̈ալ[2] «կպատմեի», բիդի պատմիլ ըմ լյա̈ալ «պիտի պատմեի», ասիլ չըմ լյա̈ալ «չէի ասի», ասիլ մէ, ասիլ մէքյ «մի ասա, մի ասէք»։ Շաղախի ենթաբարբառի համար որպես ապառնի դերբայ կարելի է ընդունել է||ի հոլովման անորոշ դերբայի սեռականը (ընդհանրապես բարբառիս ապառնի դերբայը կազմվում է ական||ական մասնիկով)։ Ի տարբերություն ական||ական կազմությամբ ապառնիի՝ այդ դերբայը սովորաբար ունի անվանական կիրառություն։ Որոշ դեպքերում անորոշի ի վերջավորությամբ սեռականը ընիլ «լինել» բային կցելով՝ կարող է կազմել երկրորդական բաղադրյալ ժամանակներ (վէր պիրիլի ընիս «որ բերելու լինես», վէր պիրիլի ընիս լյա̈ալ «որ բերելու լինեիր»)։ Հաճախ այդպիսի ձևերում ապառնի դերբային փոխարինում է անկատարը, որ և ավելի սովորական է ու տարածված, ինչպես՝ վէր տընիս ընիս «որ տանելու լինես», վէր տընիս ընիս լյա̈ալ «որ տանելու լինեիր» և այլն։

Որպես ընթացակցական դերբայ ենթաբարբառում գործածվում է անորոշի գործիական հոլովը. օրինակ՝ կյիրիլ-կյիրիլավ, հըսնիլ-հըսնիլավ և այլն։ Դերբայական այս ձևը սովորաբար արտահայտում է գլխավոր գործողությանը նախորդող մի այլ գործողություն, սակայն որոշ բայերի ընթացակցական դերբայը կարող է արտահայտել նաև ընթացքի մեջ գտնվող, դեռ չավարտված գործողություն. այս դեպքում ընթացակցական դերբայը բաղադրում է ժամանակային ձևեր, ինչպես՝ քուշտունալավ ըմ «կշտանալու վրա եմ», պըրծընիլավ ա «վերջացնելու վրա է» և այլն։

Ենթաբարբառիս օժանդակ բայի անցյալ ձևերը չեն պահպանվել. դրանց իմաստն արտահայտվում է օժանդակ բայի ներկայի ձևերի և լյա̈ալ||իլա̈ալ բառի հարադրությամբ։ Լյա̈ալ||իլա̈ալ ձևը լինել բայի վաղակատար-կատարյալ դերբայն է։

Անցյալ կատարյալի իմաստն արտահայտելու համար Շաղախի ենթաբարբառում պարզ կազմությամբ առանձին ձև չկա. վաղակատար դերբայով և օժանդակ բայի ներկայով կազմված ձևերն արտահայտում են վաղակատար ներկայի և անցյալ կատարյալի իմաստ[3] (պատմալ ըմ «պատմել եմ, պատմեցի», հվըտացալ ըմ «հավատացել եմ, հավատացի» և այլն)։

Սահմանական եղանակի վաղակատար անցյալ ժամանակի համար ենթաբարբառս առանձին ձև չունի, նրա իմաստն արտահայտվում է հարակա-

---

2 Այս ձևը գործածվում է նաև ըղձական եղանակի անցյալ ապառնիի համար. այս դեպքում եղանակների իմաստային տարբերակումը կատարվում է միայն նախադասության մեջ։

3 Առանձին դեպքերում գործածվում են նաև անցյալ կատարյալի պարզ ձևերը. սովորաբար այդպիսի ձևերն արտահայտում են ոչ թե կատարյալի, այլ անմիջական ներկայի իմաստ, ինչպես՝ ասից «հիմա ասում է», խոսից «հիմա խոսում է» և այլն։

տար դերբայով և օժանդակ բայի անցյալ ձևերով. օրինակ՝ նրստած ըմ լյալ «նստել էի, նստած էի», հվրտացած ըմ լյալ «հավատացել էի, հավատացած էի» և այլն։

Պայմանական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակներն ունեն պարզ կազմություն (կազմվում են ըղձական ապառնուց համապատասխան կը, բիդի եղանակիչներով (կըհըսնիմ, բիդի հըսնիմ), մինչդեռ նույն եղանակների անցյալ ապառնի ժամանակները կազմվում են անորոշ դերբայով և օժանդակ բայի անցյալ ձևերով, ինչպես՝ հըսնիլ ըմ լյալ «կհասնեի», բիդի հըսնիլ ըմ լյալ «պիտի հասնեի»։

Բայերի կրավորականը սովորաբար կազմվում է ներգործական սեռի բայերից վ ածանցի միջոցով, սակայն որոշ չեզոք բայեր ևս ընդունում են կրավորական վ ածանցը՝ ունենալով անդեմ կամ հարցական գործածություն։ Այսպես, օրինակ՝ նրանա մուտանվալ չի, նրանա մուտանվալ ա՞ ընիս. էս ծովըմը լղանվալ չի, էս ծովըմըս լղանվալ ա՞ ընիս, վէր խուսիս ըք և այլն։ Ստ բազմապատկական ածանցով կազմված մի քանի բայեր կրկնվող գործողության հետ միասին ցույց են տալիս նաև տվյալ գործողության ոչ ավարտուն վիճակը, ինչպես՝ պոըվստիլ (գործածվում է ծառերի, բույսերի համար) «լրիվ չեն պառավել», սիպտիկստիլ «լրիվ չեն սպիտակել», տըղնստիլ «լրիվ չեն դեղնել» և այլն։

Շաղախի ենթաբարբառում պարզ ժամանակների ժխտականը սովորաբար կազմվում է վէչ մասնիկով, սակայն ըղձական անցյալ ապառնիի պարզ ձևերը (պատմըմ վէչ լյալ, կյիրիմ վէչ լյալ) գործածական չեն. դրանց փոխարեն տարածված են պայմանական եղանակի անցյալ ապառնիի դերբայական կազմությամբ ձևերը. օրինակ՝ պատմիլ չըմ լյալ «չէի պատմի, չպատմեի», կյիրիլ չըմ լյալ «չէի գրի, չգրեի» և այլն։

Ընդհանրապես արգելական հրամայականը կազմվում է անորոշ դերբայով և մէ, մէքյ մասնիկներով, սակայն ի, ա լծորդության բայերի եզակի արգելականը կազմվում է նաև մէր (հոգնակին պահպանում է մէքյ վերջավորությունը) մասնիկով. այդ մասնիկից առաջ անորոշի լ-ն ընկնում է, իսկ վերջավորության ի, ա ձայնավորները դառնում են ը, ինչպես՝ ասըմէր, հվատըմէր, պատմըմէր, ասըմէքյ, հվատըմէքյ, պատմըմէքյ և այլն։

Շաղախի ենթաբարբառի առանձնահատկությունները ցույց տալու համար կարելի է բերել նորանոր հատկանիշներ, սակայն մենք ներկայացրել ենք այնպիսիները, որոնցով Շաղախի խոսվածքախումբն առանձնանում է ինչպես հին և ժամանակակից հայերեններից, այնպես էլ այլ բարբառներից։

ОСОБЕННОСТИ СКЛОНЕНИЯ И СПРЯЖЕНИЯ В ШАГАХСКОМ ДИАЛЕКТЕ

Б. Х. МЕЖУНЦ

Резюме

В шагахском диалекте имена существительные в неопределенной и определенной форме склоняются по-разному. Исходя из этого, для данного диалекта надо принять простое и смешанное склонения. По простому склонению склоняются те существительные, которые в форме опре-

деленности и неопределенности в родительном падеже имеют одно и то же окончание, а по смешанному — существительные, имеющие в форме определенности и неопределенности разные окончания. Шагахский диалект имеет пять простых (*ու, ա, ան, օ, ը*) и четыре смешанных (*ու-ի, ա-ի, վա-ի, վու-վի*) склонения.

В отличие от других армянских диалектов рассматриваемый диалект не имеет прошедшей формы вспомогательного глагола.

Значение прошедше-будущего времени условного и принудительного наклонений выражается неопределенным причастием и вспомогательным глаголом.